Ս. ՍԻՆԳԱԼԵՎԻՉ

# ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

ՅԵՐԵՎԱՆ ԳԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1937

9(38) 648
Ա-51 Արեգակեան
Արարչագործ Զարգացման
եւ հայրենագիտութիւն

9(30)
Ա-57

ՀԽՍՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 3 ՀԵՌԱԿԱ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

Ս. ՍԻՆԳԱԼԵՎԻՉ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1967 Թ.

7044 648 A II/39404

# ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

(Ոժանդակ նյութեր հեռակայողներին)

ՅԵՐԵՎԱՆ ԳԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1937

Թարգմ. Մ. ՉԱՐԱՐՅԱՆ
Խմբագիր՝ Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Սրբագրիչ՝ Ս. ՇԱԼՋՅԱՆ

Գիտիրատի տպարան
Գլավլիտ № 2242
Պատվեր № 28
Տիրաժ 1000

# ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

## 1.

Բնորոշելով անտիկ ստրկությունը, մարքսիզմ—լենինիզմի հիմնադիրները բացահայտել են վոչ միայն վերջինիս տնտեսական բնությունը, այլև նրա սոցիալական էությունը, սահմանելով, վոր անտիկ ստրկությունն-անտիկ աշխարհի հիմնական արտադրող դասակարգերի դասակարգային կեղեքման միջոցն է: «Հին ասիական և կլասիկ ժամանակներում,—գրում էր Ենգելսը,—դասակարգային կեղեքման գերակշռող ձևը ստրկությունն էր, այսինքն՝ վոչ այնքան հողի եքսպրոպրիացիան ժասանտներից, վորքան նրանց անձնավորությունների եքսպրոպրիացիան»[1]:

«Անտիկ պետությունը,—գրում էր նա մի այլ տեղ,—գերազանցապես ստրկատերերի պետություն էր ստրուկների հնազանդեցման համար»[2]: Անտիկ աշխարհի հիմնական հակամարտությունն ստրուկների ու ստրկատերերի հակամարտությունն էր, վորը նրա զարգացման պրոցեսում դառնում է ստրուկների ու ազատների հակամարտություն: Հունական համայնքներում այս հակամարտությունն աճում էր ստրկության աճման զուգընթաց, ստրկական աշխատանքի անընդհատ մեծացող շահագործման զուգընթաց: Ենգելսը բավական պարզորոշ սրա ներկայությունը հավաստել է Աթենքում VI—V դ.դ. «Դասակարգերի հակադրությունը, վոր այժմ գտնվում է հասարակական և քաղաքական հիմարկների հիմքում, անցնում էր արդեն վոչ թե ազնվազարմ և հասարակ ժողովրդի, այլ՝ ստրուկների և ազատների, իրավազուրկների և քաղաքացիների միջև»[3]:

---

[1] Ենգելս—«Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում», էջ 48, 1928 թ.:

[2] Ենգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 202 Մոսկվա, 1933:

[3] Ենգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», էջ 144:

Այս հիմնական հակամարտության զարգացումն արտահայտվում եր ստրուկների ու ստրկատերերի միջև մղվող դասակարգային պայքարի զանազան ձևերով—մի պայքար, վոր առանձնապես սուր եր V և հետագա դարերում։ Այս պայքարում արդեն կային այն գծերը, վորոնք նրան բնորոշում եյին իբրև բողոք ստրկատիրական սիստեմի դեմ, բայց Հունաստանում նրանք բավական թույլ եյին արտահայտվում։ Այստեղ պայքարը մղվում եր անկազմակերպ և մեծ մասամբ առանձին բռնկումների բնույթ եր կրում՝ ստրկատիրոջ սպանություն, նրա գույքի այրում, գործիքների ջարդում և այլն։ Ստրուկների կոլեկտիվ յելույթները, մասսայական կազմակերպված պայքարը դեռևս լայն թափ չեր ստացել Հունաստանում։

Շահագործման լծի դեմ ստրուկների բողոքի ձևերից մեկն եյին հանդիսանում ստրուկների բավական հաճախակի փախուստները։ Ստրուկներն իրենց տերերից փախչում եյին մենակ և ամբողջ խմբերով։ Ստրուկների փախուստ ամենից շատ տեղի յեր ունենում պատերազմների ժամանակ։ Վոչ միայն այն պատճառով, վոր յերկրի ներքին կյանքի մեջ վորոշ կազմալուծում մտցնող պատերազմը հեշտացնում եր փախուստը, այլև այն պատճառով, վոր պատերազմը մեծ սպառնալիք եր ստեղծում ստրուկների կյանքի համար. յեթե թշնամիները վերցնում եյին վորևե քաղաք, ապա նրանք, իբրև կանոն, առաջին հերթին կոտորում եյին քաղաքը պաշտպանող ստրուկներին. յեթե ստրուկները չեյին մասնակցում ռազմական գործողություններին, նրանց ծախում եյին իբրև ավար. յեթե քաղաքի պաշարումը ձգձգվում եր և պարենը չեր բավականացնում, ստրուկներին կոտորում եյին իբրև ավելորդ ուտողների։ Ահա թե ինչու Հունաստանում պատերազմները սովորաբար զուգորդվում եյին ստրուկների փախուստով։ Սա այնքան սովորական յերևույթ եր, վոր կռվող կողմերը, որինակ՝ աթենացիք ու սպարտացիք պելոպոնեսյան պատերազմի գինադադարի ժամանակ (423 թ.) պայմանագրի մեջ հատուկ վերապահում արեցին, վորը կողմերին պարտավորեցնում եր չընդունել պատերազմի ժամանակ փախած ստրուկներին[1]։ Բայց չնայած սրան՝ հետագայում, պելոպոնեսյան պատերազմի ժամանակ բազմիցս փախել են ստրուկները։ Այսպես, Նիկիասը գանգատվում եր, վոր 414 թ. Սիրակուզի մոտ գործող աթենա-

---

[1] Թուկիդիդես, IV գիրք, 118 գլ., 7։

կան նավատորմի նավերից փախան թիավարող ստրուկները, նավատորմը զրկելով ռազմական գործողությունները շարունակելու հնարավորությունից[1]։ 413 թ., Դեկալեյի մոտ աթենական բանակի ջարդվելու ժամանակ «ամբողջ տերբիտորիան գրավված եր աթենացիներից, ավելի քան քսան հազար ստրուկ անցավ թշնամու կողմը, այս թվում նաև շատ արհեստավորներ[2], վորպիսի հանգամանքը ծանր հարված եր աթենական արդյունաբերության համար, վորը պատերազմի պայմաններում պահանջում եր լարված աշխատանք։ Թուկիդիտեսը հաղորդում է նույն պելոպոնեսյան պատերազմի ժամանակ ստրուկների փախուստի մի փաստ էլ. 412 թ., յերբ Քիոսն անցավ աթենացիների ձեռքը, դաժան հալածանքների յենթարկվող ստրուկներն անցան աթենացիներին և նրանց մի շարք տեղեկություններ տվին այնտեղի մասին, վորտեղ մղվում եր պատերազմը, «մեծագույն վնաս պատճառելով քիոսցիներին»[3]։

Ստրուկները փախչում եյին նաև խաղաղ ժամանակ և կոնֆլիկտներ առաջացնում հունական առանձին պետությունների միջև։ Այսպես, 433—432 թ. (մեր թվակ. առաջ) աթենացիների ու մեգարացիների կոնֆլիկտը, վոր առաջացել եր այն բանի հետևանքով, վոր մեգարացիք իրենց մոտ ապաստան եյին տվել Աթենքից փախած ստրուկներին, պելոպոնեսյան պատերազմի առիթներից մեկն եր[4]։

III դ. սկզբի արձանագրություններից մեկը պատմում է, վոր Իոս կղզու ստրուկները փորձեցին փախչել և թաքնվեցին ափի մոտ կանգնած անտախտակամած նավի մեջ, բայց նկատվեցին։ Նավահրամանատար Զենոնը, վոր այս ժամանակ զեկավարն եր Կիկլադյան կղզիների միության, վորի մեջ մտնում եր Իոս կղզին, հավաքեց նավապետներին, այսպես կոչված տրիերարխներին, քննեց այս միջադեպը և փախած ստրուկներին հետ դարձրեց։ Սրա համար «խորհուրդը և ժողովուրդը վորոշեցին շնորհակալություն հայտնել Զենոնին»[5]։

---

[1] Նույն տեղում, VII գիրք, 13 գլ. 2.

[2] Նույն տեղում, 27 գլ.

[3] Նույն տեղում, VIII գիրք, 40 գլ. 2.

[4] Նույն տեղում I գիրք, 139 գլ. 2.

[5] Արտադրության անտիկ յեղանակն աղբյուրներում (Аспи)՝ № 69 Հրատ. Ганмк-ի, ԼԴԴ, 1933.

Հայտնի են դեպքեր, երբ ստրուկները փախել են և թաքնվել, տերերից կողոպտելով գույքը։ Հելլենական Յեգիպտոսի (III դ.) մի վավերագիր հաղորդում է ստրուկ խոհարարի փախչելու մասին, որն իր հետ տարել է ձիերի կեր գնելու համար նրան տրված պղնձյա 80 դրախմ. ստրուկը թաքնվել էր կապադովկիական զինվորների ճամբարում, և ստրկատերը կազմակերպեց նրա վերադարձը[1]։ Համանման փաստերի մասին պատմում է հելլենական Յեգիպտոսի (II դ.) մի այլ վավերագիր. մի վոմն ստրուկ Հերմոն, որ պատկանում էր ալաբանդյան դեսպանին Ալեքսանդրիայում, «փախավ 3 մինի վոսկեդրամով և 10 մարգարիտով». հենց այստեղ էլ հաղորդվում է, որ Հերմոնի հետ միասին փախել է և մի ուրիշ ստրուկ՝ Բիոնը, որ պատկանում էր պալատականներից մեկին՝ Կալլիկրատին. ստրուկը «փախավ, տանելով թիկնոց, ստրկի վերնազգեստ և կանացի սրվակ, որ արժե 6 տաղանտ, և 5 հազար պղնձյա դրախմ»[2]։

Վերջապես, որ ստրուկների փախուստը նյութական վնաս էր պատճառում ստրկատերերին և կազմալուծում նրանց տնտեսությունը, ստրկատիրական պետությունն օրենքի ուժով պաշտպանում և պահպանում էր իր շահերը։ Այսպես, աթենական օրենսդրությունը փախած ստրկի վերաբերմամբ թույլ էր տալիս կիրառել այսպես կոչված ապագոգե, որի համաձայն փախած ստրկին, իբրև ծանր հանցագործի, ամեն մի քաղաքացի կարող էր բռնել առանց որևե ձևականություն պահպանելու և հասցնել ստրկավայրը։ Այս իրավունքի հիման վրա կազմակերպվում էին փախած ստրուկների վերադարձներ։ Պետության այս ակտիվ միջամտությունն ստրկատերերի շահերի պաշտպանության գործին հանդիսանում է մի գիծ, որ առաջին հերթին բղխում է իր իսկ անտիկ պետության սպեցիֆիկ առանձնահատկություններից։ Անտիկ պետությունը հանդես էր գալիս ի պաշտպանություն ստրկատերերի շահերի ոչ միայն այն պատճառով, որ նա նրանց դասակարգային կազմակերպությունն էր, այլև այն պատճառով, որ ստրուկները, վերջինք յուրաքանչյուր առանձին ստրկատիրոջ մասնավոր սեփականությունն էին, նմանապես և սեփականություն էին պետության անտիկ համայնքի համար։

Անտիկ սեփականության, այս թվում նաև ստրուկների նը-

---

[1] Аспи, № 71

[2] Аспи № 72.

կատմամբ՝ սեփականության ընութիւնն այսպես են վորոշել մարքսիզմի հիմնադիրները. «Պետության քաղաքացիները միայն միասնաբար են տիրում իրենց աշխատող ստրուկներին և հենց այս պատճառով էլ կապված են հանրային սեփականության ձևով։ Սա պետության ակտիվ քաղաքացիների միատեղ մասնավոր սեփականությունն է, վորոնք ստիպված են ստրուկների հանդեպ պահպանելու ասոցիացիայի այս բնականորեն առաջացած ձևը»[1]։

Անտիկ Հունաստանի իրավազոր քաղաքացիները—սա ամենից առաջ ստրկատերերի համայնքն է. նրա քաղաքական արտահայտությունը հանդիսանում է պոլիսը (քաղաք-պետություն), վոր ներկայացնում է ստրուկներին միատեղ շահագործող և ազատներին աղքատացնող ստրկատերերի կոլեկտիվ։ Այս պայմաններում «հանրային սեփականության կողքին զարգանում է արդեն նաև շարժական, իսկ հետագայում և անշարժ մասնավոր սեփականությունը, բայց իբրև նորմայից շեղվող և հանրային սեփականությանը յենթակա ձև»[2]։

Մասնավոր սեփականություն, այս թվում նաև ստրուկների նկատմամբ մասնավոր սեփականության գոյությունը հանրային, պետական սեփականության շրջանակներում ըստ էության նշանակում էր, վոր անտիկ ժամանակների պայմաններում ստրկատերերի շահերն, իբրև դասակարգի, գերիշխում են մասնավոր շահերի վրա։ Այս տեսակետը շատ հստակ ձևակերպել է Պլատոնը. «Դուք (քաղաքացիներ) ինքներդ ձեզ չեք պատկանում, և այս գույքն էլ ձեզ չի պատկանում. ներկայիս ամբողջ սերունդը և նրա սեփականությունը պատկանում են ձեր նախորդների և ձեզ հաջորդող սերունդների ամբողջությանը, և էլ ավելին՝ պետությանը»[3]։ Ցեվ այնուհետև Պլատոնն ընդգծում է, վոր օրենսդրությունը պետք է յուրաքանչյուր առանձին քաղաքացու շահերը յենթարկի այն բոլոր քաղաքացիների ամբողջությանը, վորոնց շահերն արտահայտում է պետությունը։

## 2

Ստրուկներ մատակարարում էին պատերազմները, վորոնք սպասարկում էին ստրկատերերին։ Հունական պետություններում,

---

[1] Կ. Մարքս յեվ Ֆ. Ենգելս. *Յերկեր* IV հ., էջ 12. 1933։

[2] *Նույն տեղում.*

[3] Պլատոն—«*Օրենքներ*» II գլ. 923.

մասնավորապես Աթենքում, սարկատիրական բանակի հիմնական կոչումն այն եր, վոր «Աթենական դեմոկրատիայի ժողովրդական զորքը հանդիսանում եր արիստոկրատական զինված ուժ ընդդեմ սարուկների և նրանց պահում եր սանձած»[1]։

Սարկատիրական համայնք—պետությունն, սարուկների այդ կոլեկտիվ տերը, մշտապես յեռանդով պայքարում եր սարուկների ամեն մի փորձի դեմ խախտելու կամ սասանելու սարկատիրական հասարակության ուժը։ Պետության այս դերը, իբրև մի ուժի, վոր հնազանդության մեջ եր պահում սարուկներին, պարզ ըմբռնում եր Պլատոնը. հատկապես նա նշեց, վոր բավականաչափ սարուկներ ունեցող սարկատերն իրեն անվտանգ կարող և զգալ բացառապես այն պատճառով, վոր նրան պաշտպանություն և ցույց տալիս պետությունը, վոր յեթե չլիներ այս պաշտպանությունը, նա հավիտենական յերկյուղի մեջ պիտի ապրեր սարուկների հանդեպ[2]։

Յեվ հիրավի, յուրաքանչյուր սարկատեր սարուկների դեմ պայքարելիս կարող եր հույս դնել վոչ միայն ուրիշ սարկատերերի, այլև ազատ քաղաքացիների ամբողջ կոլեկտիվի, համայնք—պետության ոգնության վրա։

Այս պատճառով եվ սարուկներին վորոնելու հոգսը, իբրև կանոն, հանդիսանում եր վոչ միայն իրենց իսկ սարկատերերի գործը. փախած սարուկներին վորոնելու գործին ներգրավվում եր տեղական ադմինիստրացիան. վերև հիշատակված սարուկներ Հերմոնի և Բիոնի վորոնումը մասնակցում եր հունական ադմինիստրացիան. սարուկների վորոնումը ղեկավարում եր տեղական աստիճանավոր Ստրատոնը։

Փախած սարուկների վորոնումը սովորաբար այսպես եր կազմակերպվում. նամակներ եյին ուղարկվում, հաղորդելով ըստ-րուկի փախչելու մասին, նշվում եյին նրա արտաքին նշանները և պարգև եր խոստացվում նրան, ով կգտնի և կվերադարձնի փախածին կամ ծայրահեղ դեպքում ցույց կտա, թե վորտեղ և գտնըվում նա։ Հերմոն սարկի փախչելու վերաբերյալ նամակում հաղորդվում և, վոր նա «ծնված և Սիրիայում՝ Բամբիկում, 18 տարեկան և, միջին հասակի, անմորուք, ամուր սրնքամսերով, կղակը փոսիկով, քթից ձախ խալ ունի և բերնի ձախ անկյունից վերև՝

[1] Ենգելս—«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», եջ 201, 1933։

[2] Պլատոն—«Պետություն» 9 գլ. 578։

սալի, ձախ վերնադաստակը զրոշմված յերկու բարբարոսական տառերով»[1]։

Սարկին մատնում եր նրա մարմնի զրոշմը, իսկ յերբեմն եկ վզով պատած ողը, վոր համարյա անկարելի յեր իր ձեռքով հանել։

Սարկի վորոնումը և նրան տիրոջ վերադարձնելը վերջինից պահանջում եյին վորոշ ծախքեր. փախած սարկին տեղ հասցնելու համար, իբրև կանոն պետք եր վարձատրել լրտեսին, ինչպես և նրանց, ովքեր ցույց են տվել սարկի ապաստարանը։ Քսենոֆոնն այսպիսի բնորոշ դիալոգ ունի.

«—Ասա, Դիոդոր, յեթե քո սարուկներից վորևե մեկը փախչի, դու միջոցներ ձեռք կառնե՞ս նրան վերադարձնելու։

—Յերդվում եմ Զևսով, զուրիշներից եկ կխնդրեմ, հայտնելով, վոր պարգև կտամ»[2]։

Հիշատակված յերկու սարուկներ Հերմոնի ու Բիոնի վորոնման համար սարկատերերը խոստացան վարձատրել այսպես. «ով նրան (Հերմոնին) վերադարձնի, կստանա 3 պղնձե տալանտ, ով ցույց կտա, վոր նա գտնվում և տաճարում,—2 տալանտ, ով ցույց կտա, վոր նա գտնվում և վճարունակ և դատի համար մատչելի մարդու մոտ,—5 տալանտ»[3]։ Նույնպիսի վարձատրություն եր սահմանված սարուկ Բիոնի վորոնման համար։

Վորովհետև փախած սարկին տիրոջը հանձնելու համար վարձատրություն ստանալու պրակտիկան սովորական բան դարձավ սարկատերական հասարակության կյանքում, հրապարակ յեկան հատուկ անձնավորություններ, վորոնք զբաղվում եյին փախած սարուկներ վորսալով և սրանով ապրուստ եյին ձեռք բերում։ Հելլենական դարաշրջանի (III դ.) մի ստելեանավորի զեկույցից յերևում է, վոր յերկու յեղբայր՝ Կոլլոխուտ և Զաիդիլ բռնել են փախած սարուկների և նրանց հանձնելու համար պահանջում են 100 դրախմ արծաթ[4]։ Նույն վավերագրի հետագա տեքստից յերևում է, վոր նշված անձինք դրա հետ միասին յեղել են և սարկավաճառներ, վորոնք գործադրել են սարուկներով սպեկուլյացիա անելու հետևյալ յեղանակները. Զաիդիլն սարուկներ եր վաճա-

---

[1] Аспи, № 72

[2] Քսենոֆոն—«Հիշողություններ Սոկրատի մասին». II գիրք, 10 գլ. 1—2, կիև. 1883։

[3] Аспи № 72.

[4] Նույն տեղում

ռում, նրանք փախչում էին, իսկ Կոլոխաուան իր մոտ թաքցնում էր փախած ստրուկներին, վորպեսզի հետո նրանց համար փրկագին ստանա։ Հունաստանում ստրուկ վորսացող հատուկ մասնագետները կոչվում էին դրապետագոգներ, այսինքն փախած ստրուկ բերողներ։ Նրանց մեջ կային այնպիսիները, վորոնք փախած ստրուկներ վորսալու վրա նայում էին, իբրև մի գործի, վորն ուղղված և դեպի ստրկատիրական հասարակակարգի հիմքերի ամրացումը։ Այսպիսի մարդկանց ծառայությունները նշվում էին կառավարական հատուկ շնորհագրերով։ Այսպես, IV դ. Աթենքում քարե ստելլի վրա կանգնեցված էր պատվո գիր ի պատիվ մի քաղաքացու Իոս կղզուց, վորն զբաղվում էր աթենական փախած ստրուկներ վորսալով և նրանց տերկատերերին հանձնելով[1]։ Իոս կղզու տերկատերերը շնորհակալություն հայտնեցին Նավպակտ Զենոնին (III դ.) նրա համար, վոր նա իրենց վերադարձրեց նրա նավում թաքնվել ցանկացած փախած ստրուկներին։ Այս մասին կառավարության վորոշումը նույնպես քանդակված էր քարե ստելլի վրա[2]։

Հետապնդումներից փրկված փախած ստրուկը կարող էր ժամանակավորապես ապաստանել վորոշ տաճարներում, վորոնք հանդիսանում էին այսպես ասած պայմանական ապաստարան թաքնված ստրկի համար։ Ապաստարանի իրավունք, այսպես կոչված ասիլիի իրավունք վայելում էին շատ տաճարներ. Դորտինի տաճարը, Կրետեյի տաճարը, Թեզեոսի տաճարն Աթենքում, Ապոլոնի տաճարը Դելֆիում, Կանոպի տաճարը, ներքին Յեգիպտոսի և այլն։ Մի քանի տաճարներում նույնիսկ հատուկ շենքեր էին շինված փախած ստրուկների համար, վորտեղ նրանք ապրում էին, մինչև վոր սովը չեր քշում այնտեղից, կամ մինչև վոր քուրմը չեր վճռում փախած ստրկի բախտը։

Տաճարում ապաստանելն ստրկին փաստորեն չեր պաշտպանում հալածանքներից։ Տաճարը նրանց համար ստրկությունից ազատվելու հնարավորություն էլ չեր տալիս։ Կրետե կղզու որենսդրական հուշարձանը, այսպես կոչված գորտինյան որենքն ասանձնում էր փախած ստրկի միայն ժամանակավոր պաշտպանությունը. նա արգելում էր ստրուկ վաճառելն այն ժամանակ, յերբ նա թաքնված և տաճարի ապաստարանում, փախուստից մի

---

[1] "Известия ГАИМК„, № 101, էջ 135—136. 1934,

[2] Асни, № 69.

տարի հետո։ Ուրիշ դեպքերում տաճարում ժամանակավոր ապաստան գտած տորուկը տաճարից պաշտպանություն չէր ստանում. այստեղ տրկի բախտը կախված էր քուրմից, նա յեր վճռում՝ տրկին տալ իր տիրոջը, թե հանձնել ուրիշի։ Տաճարում թաքնվելու փորձ արած փախած տորուկը կրկին դատապարտվում էր տրկական կյանքի։

Տորուկների փախուստները հանդիսանում էին տրկատերերի դեմ պայքարելու պասսիվ ձևերից մեկը, տորուկների անկազմակերպվածության ցուցանիշը։ Բայց տորուկների փախուստներն անտիկ Հունաստանի պատմության մեջ կարևոր դեր էին խաղում այն տեսակետից, որ նրանք քայքայում էին մոցնում տրկատիրական տնտեսության մեջ, իսկ պատերազմների ժամանակ քաղաքական լուրջ վտանգ էին ներկայացնում հունական պետությունների համար։

Դասակարգային պայքարի ավելի գործուն ձևը հանդիսանում էին տորուկների ապստամբությունները։ Ճիշտ է, Հունաստանում նրանք այնպիսի լայն թափ չստացան, ինչպես Հռոմում II—I դարերում։ Հունաստանում տորուկների ապստամբություններն իբրև մասսայական բողոքի կոլեկտիվ ձև ընդդեմ տնտեսության տրկատիրական սիստեմի և տրկատիրական հասարակակարգի՝ չզարգացան և հունական ապստամբությունների մակարդակին չհասան։ Վերն է սրա պատճառը։

Այս հարցի խորհրդային հետազոտողներից մեկը՝ Պրոֆ. Կրյուդերը, գտնում էր, որ Հունաստանում տորուկների շարժման թուլության հիմնական բացատրությունը հունական արդյունաբերության առանձնահատկությունների մեջ է։ Նա գտնում էր, որ անտիկ արտադրության վիճակը, որն ըստ էության մանր էր, քիչ քանակությամբ տորուկներ ուներ, ձեռնարկություններում չէին կենտրոնացած տորուկների բավականաչափ մասսաներ, անհրաժեշտ նախադրյալներ չէր ստեղծում տորուկների շարժման զարգացման համար. մյուս կողմից՝ Հունաստանի գյուղատնտեսության համար էլ բնորոշ չեն տրկական խոշոր լատիֆունդիաները. այնտեղ գերիշխում էր մանր հողատիրությունը[1]։

Բայց Կրյուդերի այս դատողություններն ամենևին չեն համապատասխանում փաստերին, հետևաբար, վոչինչ չեն բացատրում քննարկվող հարցում։ Սխալ է այն բանը, թե V—IV դ. դ.

---

[1] „Известия ГАИМК„, № 101, էջ 122 և հետևյալները, 1934.

սարուկները բավականաչափ չեյին կուտակված Հունաստանի առաջավոր պետությունների արդյունաբերության մեջ։ Հայտնի յե, որ դեռևս IV դ., նախասոլոնյան ժամանակաշրջանում, պարտքերի դիմաց սարկացումն արդեն մասսայական բնույթ ել կրում[1]. հայտնի յե, որ Ատտիկայում, Լավրիոնի հանքերում աշխատում եյին հաղարավոր սարուկներ[2]. հունական պետություններում կային արհեստանոցներ, որտեղ աշխատում եյին հարյուրից ավելի սարուկներ (Լիսիի վահանների արհեստանոցը V դ., Աթենքում՝ 120 սարուկներով[3]. Փոկիացի Մնասոնի մոտ աշխատող հաղարավոր սարուկները և ուրիշ.)։ Հայտնի յե, որ պելոպոնեսյան պատերազմին, 413 թ., 20 հաղար աթենական սարուկ անցան... Սպարտայի կողմը[4]. այսպիսի մասսայական յերևույթն անկարելի կլիներ, յեթե Ատտիկայում մեծ թվով սարուկներ կուտակված չլիներեյին։

Բավականաչափ համոզիչ չեն Կրյուգերի և այն դատողությունները, թե աթենական սարուկների կյանքի համեմատաբար տանելի մակարդակը վորոշում ել նրանց անբավարար ակտիվ պայքարն սարկատերերի դեմ։ Հաստատելով այս, Կրյուգերն ամբողջությամբ անդրադարձել և բուրժուական պատմագիտության դիրքերն սարկության վերաբերմամբ (Լեատուրնո և ուրիշ.), վորոնք կեղծ—քսենոֆոնյան «Աթենական Պոլիտիայի» (հունական դրող Քսենոֆոնին վերագրվող յերկ) մի տեղի հիման վրա, որ վերաբերում և աթենական սարուկներին[5], ապացուցում եյին, որ Աթենքում «շնորհիվ բարքերի մեղմության սարուկների դրությունն առանձնապես վոդրալի չեր», որ «աթենացիների մարդասիրությունն իրենց սարուկների վերաբերմամբ» միանգամայն տանելի յեր դարձնում սարուկների դրությունը և այլն[6]։ Հանրահայտնի յեն սարուկների ամենադաժան շահագործման փաստերը Լավրիոնի ատտիկական հանքերում, աթենական սարկատերերի խստությունն ու դաժանությունն սարուկների վերաբերմամբ. Վալլոնը ցույց տվեց, որ սարուկներին սիրում եյին

---

[1] Պլուտարքոս.— «Սոլոն», 8 գլ. 4. ՍՊԲ. 1891.

[2] Քսենոֆոն.— «Յեկամուտների մասին». IV գիրք. 14 գլ.

[3] Լիսի.—«Ճառեր» XII ճառ,, եջ 19.

[4] Թուկիդիտես.— IV գիրք, 118 գլ. 7.

[5] Կեղծքսենոֆոնյան «Աթենական Պոլիտիա» I գիրք. եջ 10—11:

[6] Լեատուրնո.—«Սարկության եվոլյուցիան», եջ 236—238. № 1898.

աշխատել ձեռքերը շղթայակապ, վոտքերը կապանքներով, հաճախ յերկաթե վզողով։ Փախուստի փորձից հետո ստրուկներին դրոշմում եյին շիկացրած յերկաթով[1]։ Հայտնի յեն փաստեր, յերբ ստրուկներին դաժան տանջանքների յեն յենթարկել սթենական դատարանում և այլն։

Հունաստանի ստրկական ապստամբությունների անկազմակերպության պատճառների առթիվ կարելի յե նշել հետևյալը, ստրուկների և ստրկատերերի հակամարտությունը դեռևս գտնվում եր հասունացման պրոցեսում, Հունաստանում այն չեր հասել այնպիսի բարձրության ու այնպիսի ուժի, վորպեսզի վերածվեր ստրուկների մասսայական փոթորկահույզ պայքարի ընդդեմ ստրկատերերի։ Ստրուկների ապստամբությունների մանր կրակները բռնկվում եյին Հունաստանի առանձին վայրերում՝ սկսած V դարից, բայց նրանք չեյին ձուլվում և դառնում ստրուկների ապստամբության միասնական հրդեհ, ինչպես Հռոմում։

3

Հունաստանում ստրուկների վաղ ապստամբություններից մեկը տեղի ունեցավ Արգոսում, 494 թվականին։ Այս ապստամբությունը կապված եր Սպարտայի կռվում Արգոսի զորքի կրած պարտության հետ։ Սպարտացիք ջախջախեցին արգոսցիներին, վոչնչացրին նրանց վոչ միայն զորքը, այլև ընակչության մասսան (ազատ քաղաքացիների), և ստրուկներն ոգտվեցին այս մոմենտից ապստամբելու համար։ Սա ստրուկների հաջող ապստամբություններից մեկն եր. նրանք գրավեցին քաղաքը, դեն շպրտեցին ստրկատերերի կառավարությունը, կազմակերպեցին իրենց կառավարումը։ Հերոդոտն ուղղակի ասում է, վոր պատերազմի հետևանքով «Արգոսն այնքան մարդկանցից զրկվեց, վոր բոլոր գործերը մնում եյին ստրուկների իրավասության տակ, վորոնք ամեն ինչ կառավարում և տնորինում եյին»[2]։ Ստրուկները գրավեցին նաև Տիրինթոս քաղաքը։ Բայց ապստամբությունը ջախջախվեց։

Սակայն ստրուկների իշխանությունը տապալելուց հետո յել Արգոսում ստրուկների շարժման սպառնալիքը չվերացավ։ Վորոշ ժամանակ անց կրկին ապստամբություն բռնկեց. ապստամբ ըստ-

---

[1] *Wallon.*—"Histoire de l'esclavage dans l'antiquité„. V. 1, p. 415.

[2] Հերոդոտ.—VI գիրք՝ 83 գլ.

բուկները հարձակվեցին քաղաքի վրա. «...նրանց միջև շատ տեվական պատերազմ ծագեց, վորից արդիվացիք հաղթով հաղթող դուրս յեկան»[1]։

Ստրուկների բավական նշանակելի շարժում տեղի ունեցավ անտիկ աշխարհի ստրկատիրական խոշորագույն կենտրոն Սիցիլիայում դեռևս V դարում։ Այս դարում Սիցիլիայի ստրուկների մեծաքանակ լինելու մասին մենք ունենք Դիոդորի վկայությունը, վորը նշել է հունա-կարթագենյան՝ հույների համար հաջող պատերազմի հետևանքով Սիցիլիայի հունական գաղութներում ստրուկների բավական շատանալը։ Այս պատերազմում գերիների մասային ստրկացրին և նրանց գրավեցին մասնավոր անձինք։ Սիցիլիայի ստրուկների V դ. ապստամբությունները հանդիսացան Սիցիլիայի ստրուկների II դարի վիթխարի շարժումների նախադուշակները[2]։

Վավերագրով հաստատված ստրուկների առաջին ապստամբությունը տեղի ունեցավ 414 թվականին հունական Սիրակուզ գաղութում։ Ապստամբ ստրուկների գլուխ անցավ վոմն Սոսիստրատ։ Յերբ հայտնի դարձավ ստրուկների առաջիկա յելույթի մասին, բանակցությունների համար նրանց մոտ ուղարկվեց Սիրակուզի հեծելազորի պետ Դիոմաքոսը, վոր մոտիկ հարաբերությունների մեջ եր Սոսիստրատի հետ։ Կառավարության հանձնարարությամբ Դիոմաքոսը զորավար Հերմոկրատի հետ միասին բանակցություններ սկսեց Սոսիստրատի հետ 20 ստրկի ներկայությամբ։ Հերմոկրատը 600 հոպլիտի (ծանր զինված մարտիկ) ուղեկցությամբ հանդես յեկավ ստրուկների առջև և նրանց խոստացավ ապստամբ ստրուկներին ազատ արձակել, իսկ Սոսիստրատին դարձնել Սիրակուզի վարչակից։ Ստրուկները հավատացին այս խոստումներին, բայց չարաչար խաբվեցին. շարժման ղեկավարները բռնվեցին և մահապատժի յենթարկվեցին, մնացածները վերադարձվեցին իրենց տերերին. ստրուկների մի մասը փախավ աթենացիների մոտ, վորոնց նավատորմն այդ ժամանակ ռազմական գործողություններ եր վարում Սիցիլիայի ափերին[3]։

---

[1] Դիոդոր.— XI գիրք, 20 գլ.

[2] Սիցիլիայի ստրուկների II դ. շարժման մասին տես Սերգեյևի հոդվածը— „Борьба классов“ № 6, 1935 թ., եջ 86.

[3] Սիրակուզի ստրուկների ապստամբության վերաբերյալ նյութերը տես Կրյուգերի հոդվածում։ Известия ГАИМК № 101, եջ 126—127, 1934.

Ստրուկների մասսայական շարժումներ տեղի ունեցան II դարում, Բիոս կղզում, վոր ստրուկների առևտրի խոշորագույն կենտրոնն եր։ Այս շարժման մասին պատմել է վոմն Նիմֆոդոր սիրակուզցի, վորի աշխատությունը բավականաչափ ինտերպոլյացիաների[1] յե յենթարկվել և սրա հետևանքով անստույգ շատ բան է պարունակում։ Սակայն աղբյուրի հիմքում, անպայման, գտնվում է պատմական փաստի հաղորդումը։ «Բիոսցիների ստրուկները,—գրում է Նիմֆոդորը,— փախչում են իրենց տերերից և թաքնվում լեռներում. այնտեղից նրանք բազմություններով հարձակվում են մասնավոր կալվածքների վրա և թալանում»[2]։ Այս փախած ստրուկներին միավորեց նրանց մեջ աչքի ընկած առաջնորդ Դրիմակը։ Նրա ղեկավարությամբ ստրուկները կռվի մեջ մտան ստրկատերերի հետ, ընդ վորում ստրկատերերն ստիպված յեղան բանակցություններ մտնելու Դրիմակի հետ։ Ստրուկները խոստացան դադարեցնել կողոպուտներն ու արշավանքներն ստրկատերերի կալվածքների վրա, իսկ Դրիմակը կազմակերպեց հատուկ դատարան ստրուկների փախչելու պատճառները քննելու համար։ Այսպիսով, Դրիմակը հանդես եր գալիս իբրև միջնորդ ստրուկների և ստրկատերերի միջև։ Դիմելով ստրկատերերին, նա ասել է. «Յերբ ձեր ստրուկները փախչեն, յես գործը կքննեմ, և յեթե պարզվի, վոր նրանք փախել են կյանքի անտանելի պայմաններից, յես նրանց կթողնեմ ինձ մոտ. իսկ յեթե գանգատներն անհիմն ճանաչվեն, յես նրանց հետ կուղարկեմ տիրոջ մոտ»[3]։ Այնուհետև Նիմֆոդորը հաղորդում է, վոր սրանից հետո Բիոսի ստրուկների և ստրկատերերի միջև խաղաղ հարաբերություններ հաստատվեցին. Բիոսի մի մասում գոյություն ուներ ստրուկների պետությունը՝ Դրիմակի գլխավորությամբ, նրա մյուս մասում՝ Դրիմակից կախված ստրկատերերի պետությունը։ Բայց Դրիմակի պետությունը դասակարգային-քաղաքական իմաստով վոչնչով չեր տարբերվում ստրկատերերի պետությունից. նա կազմակերպված եր ըստ վերջինիս տիպի. Դրիմակը հանդիսանում եր այս պետության անսահմանափակ կառավարիչը։ «Ստրուկների վերաբերմամբ Դրիմակի իշխանությունը բռնապետական իշխանություն եր. հենց փախած ստրուկները, վոր նրա հետ

---

[1] Ինտերպոլյացիա նշանակում է արտագրողի կողմից ձեռագիր յերկի տեքստի մեջ հեղինակին չպատկանող խոսքեր և ամբողջ փրագներ մտցնելը։

[2] Аспи, № 609

[3] Аспи, № 609

եյին, նրանից ավելի շատ եյին վախենում, քան առաջ վախենում եյին իրենց տերերից, և անում եյին ամեն բան, ինչ նրան հաճելի յեր՝ Դրիմակին յենթարկվելով իբրև պետի»։[1]

Դրիմակի մահվանից հետո նրա ստեղծած պետությունը քայքայվեց. փախած ստրուկները կրկին նորոգեցին հարձակումները Քիոսի ստրկատերերի վրա։

Անտիկ աշխարհի պատմության մեջ յերկրորդ դարը հանդիսանում է ստրուկների փոթորկահույզ ապստամբությունների շրջան, ապստամբություններ, որ տեղի յեն ունեցել Հռոմեական պետության զանազան վայրերում, որի կազմի մեջ այդ ժամանակ մտնում եր Հունաստանը։ Սիցիլիայի ստրուկների վերոհիշյալ հեղափոխության ազդեցության տակ II դարում Ատտիկայում, Լավրիոնի հանքերում, իսկ հետո Դելոս կղզում, ստրուկների առևտրի այս խոշորագույն կենտրոնում, տեղի յեն ունենում ստրուկների շարժումների բռնկումներ[2]։ Այս շարժումները ճնշվեցին։ Սիցիլիայի ստրուկների յերկրորդ հեղափոխության (104—101 թ թ.) ազդեցության տակ կրկին տեղի ունեցավ Լավրիոնի հանքերի ստրուկների ապստամբություն, որ բավական նշանակելի չափեր ընդունեց։ «Բազմաթիվ միրիադներով (բյուր = տաս հազար) ատտիկական ստրուկներ աշխատում եյին հանքերում՝ շղթայակապ... Ապստամբելով, նրանք կոտորեցին հանքերի պահակներին, տիրացան Սունիի ակրոպոլիսին և յերկար ժամանակ ամայացնում եյին Ատտիկան։ Սա տեղի ունեցավ Սիցիլիայի ստրուկների յերկրորդ ապստամբության շրջանում[3]։

Հունական ստրուկների քաղաքական ակտիվությունն արտահայտվում եր վոչ միմիայն նրանց հեղափոխական յելույթներում ընդդեմ ստրկատերերի. Հունաստանում բազմիցս այնպիսի փաստեր են տեղի ունեցել, յերբ ստրուկների շարժումները կապված են յեղել ազատների մեջ տեղի ունեցող դասակարգային պայքարի հետ։ Դեռևս VI դ. վերջում, յերբ Ատտիկայում տեղի յեր ունենում դեմոկրատական մասսաների պայքար տոհմային ավագանու դեմ, այս պայքարին ներգրավվել եյին նաև ստրուկները։

Հունաստանի ավելի հետագա պատմությունը մեզ տալիս է նաև դեմոկրատական շարժման մեջ ստրուկների մասնակցելու մի

---

[1] Аспи № 609

[2] Аспи, № 609

[3] Ամֆիթիոս, VI գիրք, եջ 104.

շարք փաստեց։ V դարում Պլատեյայում պայքարող քաղաքական կուսակցությունները պայքարի մեջ եկին ներգրավում նաև ստրուկներին. «...Պլատեյայում ստրուկները դեմոկրատիայի կողմն են»[1]։ Յերբ 427 թ. Կորկիրում բռնկվեց քաղաքացիական կռիվը, «...յերկու կողմերն ել լրաբերներ եկին ուղարկում շրջակա դաշտերը, իրենց կողմը կանչելով ստրուկներին՝ խոստանալով ազատել նրանց. ստրուկների մեծ մասը հարեց ժողովրդին»[2]։

Բայց դեմոկրատական շարժումների և ստրուկների շարժումների կապի վերաբերյալ այս փաստերը հիմք չեն տալիս յեզրակացնելու, որ հին Հունաստանում գոյություն է ունեցել միասնական հակաստրկատիրական ճակատ. ստրուկներն այս շարժումներում հանդիսանում եկին վոչ ավելի, քան զինվորներ գերիշխող դասակարգերի ձեռքին, որովհետև ազատների դեմոկրատական խավերի շարժումներն ուղղված չեկին ստրկատիրական հասարակակարգի դեմ։

Սակայն ստրուկների յելույթներն ստրկատերերի դեմ անկախ այն բանից, թե ինչ ձև եկին ընդունում նրանք, չեկին կարող ստրկատերերի մեջ սարսափ չներշնչել իրենց բախտի համար։ Ստրուկների ապստամբությունների սպառնալիքի առընչությամբ ստրկատերերի ունեցած անհանգստությունը շատ ցայտուն արտահայտված է Պլատոնի բազմաթիվ արտահայտումների մեջ։ «Ստրուկն այնպիսի մի սեփականություն է, որին տեր լինելը շատ դժվարություններ է բերում, և փորձը մի անգամ չե ցույց տվել այս»,—գրում եր Պլատոնը, հենվելով ստրուկների հաճախակի ապստամբությունների և այն աղետների վրա, որ հասնում եկին պետությանն այս ապստամբությունների հետևանքով[3]։

Այս նույն միտքը Պլատոնն արտահայտել է նաև հետևյալ թեզիսով. «Չե՞ վոր ստրուկները յերբեք տերերի բարեկամը չեն դառնա այնպես, ինչպես անպետք մարդիկ չեն դառնա կանոնավոր մարդկանց բարեկամ»[4]։ Ուրիշ կապակցությամբ Պլատոնը գրում եր, որ շատ ստրուկների տեր հարուստները կարող են ապրել յերկյուղ չունենալով ստրուկներից, որովհետև նրանց պաշտպանում է պետությունը. յեթե չլիներ այս, «ինչպիսի մեծ սար-

---

[1] Դիոդոր XIII գիրք, եջ 41.

[2] Թուկիդիտես, III գիրք, 73 գլ.

[3] Պլատոն. «Որենքներ», VI գիրք, եջ 777.

[4] Նույն տեղում, եջ 757-ա.



A II 39404
70+1/648

սափ կուներնար նա (հարուստը) իրեն, իր յերեխաների ու կնոջ համար, վոր չլինի թե ստրուկները կոտորեն բոլորին»[1]։

Այս սարսափն ստրուկներից ստիպեց ստրկատերերին և ընտրիկատիրական պետությանը դիմելու ստրուկների ազատամրությունները կանխելու ամենատարբեր յեղանակների։ Այսպես, IV դարում իբրև ստրուկների շարժումների դեմ պայքարելու միջոց նույնիսկ առաջարկ եր արվում սահմանափակել ստրուկների քանակը և թույլ չտալ ստրկությունը զարգացնելու հույներին ստրուկ դարձնելու միջոցով։ Այս մտայնության ազդեցությունը չափազանց գերագնահատել են բուրժուական հետազոտողները, վորոնք գտնում եյին, վոր հունական կյանքի պրակտիկայում սրա հետևանքով շատ սահմանափակ թվով հույն ստրուկներ են յեղել։ Պլատոնն ու Արիստոտելն իրոք զարգացնում եյին այն թեորիան, վոր հույնը բնածին ստրկատեր է, վոր նա իրավունք ունի տիրելու բարբարոս ստրուկներին, վոր հույներին չի կարելի ստրուկ դարձնել։ Պլատոնն ուղղակի ցանկություն հայտնեց, վոր հույներն ստրուկ չդարձնեն պատերազմի ժամանակ գերի վերցրած յեղակիցներին։

Բայց հունական պրակտիկ կյանքում այս տեսակետը շատ թույլ արտացոլում եր գտնում։ Հայտնի յե, վոր հույն-պարսկական պատերազմների ժամանակ Հելոն Սիրակուզցին իբրև ստրուկ վաճառեց մեգարացիներին և եվբեյացիներին[2]։ Պելոպոնեսյան պատերազմի ժամանակ, 413 թ. Սիցիլիայի ջարդից հետո հազարավոր աթենացիներ և նրանց դաշնակիցներն ստրկացվեցին[3]։ Փիլիպոս Մակեդոնացին իբրև ստրուկ վաճառեց ոլինթացիներին կայլն։ Յեթե պատերազմի ժամանակ տեղի յեն ունեցել գերված հույներին ազատ թողնելու առանձին փաստեր, ապա սա բնավ մարդասիրական կամ ազգային բնույթի նկատառումների հետևանք չեր, այլ հետևանք եր ռազմաքաղաքական նկատառումների, սա մի մանևր եր, վոր նպատակ ուներ թշնամուն գրավել իր կողմը։ Այսպես պետք է գնահատել այն փաստը, վոր պելոպոնեսյան պատերազմում, սպարտացիների կողմից Մեթիմնի մոտ (Լեսբոս կղզի) լեսբոսցիներին ջարդելուց հետո զորավար Կալլիկրատիդը լեսբոսցի հույներին իր կողմը գրավելու համար հայտարարեց, վոր հույնե-

---

[1] Պլատոն, «Պետություն», IX գիրք, եջ 578-ա։

[2] Հերոդոտ, VII գիրք, 156 գլ.

[3] Թուկիդիդես. VII գիրք, 85 գլ. եջ 3—4.

րից վոչ վոք չի ստրկացվի, և միևնույն ժամանակ նույն Կալլիկրատիդն իբրև ստրուկների վաճառեց այստեղ գրված աթենական կայազորը[1]։

Բայց անվիճելի յե, վոր Պլատոնի այն դատողությունները, թե հույներն ստրուկ չպիտի լինեն, և Արիստոտելի ցուցումները, թե ստրուկն ամենից առաջ բարբարոս և, պայմանավորված են այն սպառնալիքը հաշվի առնելով, վոր ներկայացնում էին ստրուկների շարժումները Հունաստանում V—IV դարերում։ Հանձին հույն ստրուկների ներքին թշնամիներ չունենալու համար, վորոնք սոցիալական ավելի մեծ վտանգ էին ներկայացնում, քան բարբարոս ստրուկները, ստրկատիրական հասարակության գաղափարախոսներն ստրկատերերին նախազգուշացնում էին հույներին ստրկացնելուց։

Բարբարոս ստրուկների համախմբման և միատեղ յելույթների հնարավորությունը կանխելու համար առաջարկվում էր մի ազգության ստրուկներին մի տեղ չպահել։ Պլատոնն ուղղակի հանձնարում է «...միևնույն ազգության ստրուկներ չունենալ, այլ վորքան հնարավոր է, ունենալ զանազան լեզուներով խոսող ստրուկներ, յեթե միայն ցանկալի յե, վոր նրանք ավելի լավ կրեն ստրկությունը»[2]։ Ըստ յերևույթին այս խորհուրդներն իրականացվում էին հունական ստրկատիրության գործնականում։ V դարի հունական արձանագրություններից մեկում թվարկվում են վոմն Կեֆիսոդորի պատկանող 16 ստրուկ, և նրանց մեջ կան տաս զանազան ազգությունների պատկանող ստրուկներ[3]։

Հին հունական ստրուկների շարժումների զարգացման կարևորագույն փուլերի վերլուծումը թույլ է տալիս յեզրակացնելու, վոր թեև այս շարժումները լայն թափ չեն ստացել այնտեղ և փոթորկահույզ խռովությունների չեն վերածվել ընդդեմ ստրկատերերի, նրանց նշանակությունն անտիկ աշխարհի դասակարգային պայքարի պատմության մեջ անվիճելի յե։ Ստրուկների շարժումը Հունաստանում հանդիսանում էր արտադրության անտիկ յեղանակի զարգանալ սկսած ճգնաժամի ցուցանիշը։ Կռվելով ստրկատիրական հասարակակարգի դեմ, ապստամբության դրոշ բարձրացնելով նրա դեմ, ստրուկներն արագացրին այս հասարակակար-

---

[1] Քսենոֆոն. „Hellenika". I գիրք, 6 գլ., եջ 14—16.

[2] Պլատոն. «Օրենքներ», VI գիրք, եջ 777-ը.

[3] C. L. A. (Corpus Inscript. Atticon). I հ. № 277.

գի քայքայման պրոցեսը։ Այսպիսով, ստրուկների շարժումներն օբյեկտիվ կերպով ճանապարհ հարթեցին արտադրության նոր, ավելի պրոգրեսիվ յեղանակի համար, վորը պետք է դար փոխարինելու ստրկատիրականին։ Սրանումն է ստրուկների շարժումների հակայական պրոգրեսիվ դերը։ Նրանք հանդիսացան հեղափոխական այն պրոցեսսի պատմականորեն անհրաժեշտ ողակը, վոր ձևակերպել է ընկեր Ստալինն իր թեզիսում.

«Ստրուկների հեղափոխությունը վերացրեց ստրկատերերին և վոչնչացրեց աշխատավորների շահագործման ստրկատիրական ձևը»[1]։

*(„Борьба классов“ № 1, январь 1936 г.)*

[1] Ի. Ստալին. «Լենինիզմի հարցեր», եջ 527. Մոսկվա, 1934։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032404

[104]

135

II
A 32404

ԳԻՆՆ Ե 80 ԿՈՊ.